

Ի Հրաւարիս ծնունդն եւ ի յայտնութիւն Տեառն
մեռոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի

"Լեւտարանեմ՝ ձեզ ուրախութիւն
մեծ՝ ասէ հրեշտակն, որ եղիցի ամենայն
հեթանոսաց"։ զուրախութենէն ասէր, ու
րում անթարթ աչօք ակնունէին կա-
ճառք սրբազան մարգարէից ՚ի թելա-
դրութենէ շնորհաց սուրբ հոգւոյն։ Լա-
ւհա՛ւ սցսօր ուրախացեալ ցնծայ հարս-
նարան երկնային։ զի փեսայն փառացի
յերկնից խոնարհեալ ծառայաբար ՚ի
ծոցոյ Հօրն երկնաւորի բանն Լստուած՝
որ իսկզբնն աշխարհի գառն զենեալ
անուանիւր, անբաժան Լստուածու-
թեամբ ՚ի Հօրէ եւ ՚ի Հոգւոյ փութ։ յ
յերկիր առ ՚ի մարմնանալ եւ զլէնուլ
զենութիւն եւ զմարմին նախամարդոյն
Լուսմայ՝ գերբնական իմն խառնելով
ընդ Լստուածութեան հրաշալի եւ նոր
խառնմամբ։ զայն որով բնութիւն մարդ-
կային սեռիցն՝ ենթարկեցան յաւիտե-
նական եւ ժամանակեայ մահուան եւ ան-
մուռնջ հեծեին ՚ի սգաւորական սահ-
մանի, եւ որով ահա այսօր ծննդեամբ
նորածին փրկչին այնորիկ՝ լուծան կա-
պանք սգւոյ եւ մահու։ քանզի որպէս
հայրն երկնաւոր ըստ անձնոց խոստմն
իւրոյ յառաջագոյն ՚ի ձեռն կանխագու-
շակ մարգարէից լցելոց եօթնարիւնեանն
շնորհօք հոգւոյն սրբոյ՝ յայտնեաց մարդ-
կայինս ազգի, ըստ այնմ էառ լրումն
ամենայն կանխատեսութեան աւետեաց
՚ի ձեռն ընտրելոցն Լստուածոյ՝ յորս կայ
ծականամարդ սուրբ մարգարէն Լստա-
յիսս այլ ընդ այլոց եղեալ ելուզանէր

՚ի շրթունան զարմանահրաշ ձայն սրկու-
թեամբ՝ յոճ իմաստիցն առբերելով
զունակութիւն հոգւոյն կրելութեամբ
հոգւոյ երկնաւորի եւ ազդարարութեմ,
թէ "Լհա կոյս յլացի եւ ծնցի որդի եւ
անուն նորս կոչեսցի Լամանուէլ՝ որ
թարգմանի ընդ մեզ Լստուած"։ Եւ ան-
զինոյն ինքն ծնեալն ՚ի կուսէ լինելոց
էր յոյս աշխարհի եւ ակնկալութիւն ա-
մենայն հեթանոսաց։ բաբէ՛ մեծութեմ
եւ անհասութեան սքանչելի խորհրդոյս
Լստուածոյ։ յայտնեցան խորհուրդքն ան-
քննելիք, եւ ծնաւ տէրն Լամանուէլ,
ծնաւ եւ խորտակեալ զշօրութիւն բան-
սարկուին, որ ծպտեալ ՚ի կերպարանս
օձի՝ բազմահնարն պատրեաց զնախահայ-
րն մեր եւ պատուիրանշանց արարեալ
՚ի կենսաբաշխ պատուիրանէն՝ զըկեաց
՚ի յաւիտենական փառացն որ ՚ի դրախ-
տին փափկութեան գրգանայր յերանա-
կան վիճակին եւ ուրախանայր ընդ հրեշ-
տակս։ Լա դու ով նախահայրդ մարդ-
կային սեռիցս։ ուրախացիր յուրախու-
թիւն մեծ, ցնծա եւ զուարճացիր զգե-
ցեալ զնոր զուարթարար ուրախութիւն։
զի երկունք փրկութեան աշխարհի յայտ-
նեցին զաւետումն եւ զնախասահման ընդ
ցնծալիւր ոգևորեցուցանելոյն հրեշտա-
կապետին Վաբրիէլին՝ որ աւետեաց կու-
սին Եւրիամու ասելով, ուրախ լեր բեր-
կրեալդ տէր ընդ քեզ։ որում նորա-
հրաշ վարկուցեալ զբան հրեշտակապե-
տին՝ խորհէր ընդ միտս թէ որպիսի ինչ
իցէ ողջոյնս այս, եւ դեղեւէր մարդկե-

զէն խորհրդով և անհաճութեամբ, առ
որ ասէ ցնա հրեշտակն "մի երկնիւր Սա-
րիամ. զի գտեր զշնորհս յաստուծոյ, և
ահա յղատիւր և ծնցիս որդի և զանուն
նորա կոչեսցես (Յիսուս)". Վասն զի հոգին
սուրբ եկեացէ 'ի քեզ և զօրութիւն
բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո:
Ո՛վ ամենաբարձրելի Մատուած. ան-
դառամ գթութեանդ քո ծագեցան 'ի
սերունդս նախամարդոյն Մշամայ Ճա-
ռադայթք և շնորհ ք անասմանք. քանզի
զմշտնջենական տարածեցէր 'ի նոսա ըզ-
լոյս դարման տանելով խոցուածոյ և վի-
րաց բնութեան մարդկան՝ առաքելով
յաշխարհ զորդիդ քո Սիւսիս զանչոր-
ջարեւին 'ի չարչարանս առ 'ի բառնալ
զմեղս աշխարհի. որով ամենայն արա-
րածք հաղորդակից եղեալ անվսխճան
ուրախութեան երկնից՝ նորոգեցան 'ի
ծնունդս հոգեւոր՝ որդեգրութեամբ
հօրդ երկնաւորի 'ի նորոգ և 'ի հրաշալի
յայտնութեան որ 'ի բեթղէհէմ: Իսկ
դու բեթղէհէմ՝ դրախտավայր երկիրդ
Յուդա. ցնծա և զուարճացիր. քանզի
նոր արիւն ծագեաց 'ի քեզ զոր տեսեալ
մոգուցն զայս հրաշալի տեսին յաշխար-
հէ իւրեանց՝ զիմեցին առ 'ի տեսանել
զլուսապայծառ արիւն ծագեալ 'ի հրէա-
ստանի, որոյ ճառագայթն ընդ ոլորտս
աշխարհի սփռեալ լուսաւորէր զհամայն
տիեզերս. և տեսեալ մոգուցն զաստ-
ղըն նորա յարեւելց փայլեալ՝ և հիւ-
ցեալ ընդ այս հրաշափառ խորհուրդս՝
ասէին ցլմեանս, արդեօք զինչ իցէ

այս տեսիլս որ երևեցաւ մեզ, օն եկայք
երթիցուք և սառեցեսցուք թէ զինչ է
զոր տեսաք մեք. և յայս միտս ելեալ
երեքեանքն 'ի միասին 'ի հրէաստան ա-
ռաշնարդութեամբ աստի զի երևելոյ, և
գտին զմանուկն 'ի գիրկս մօրն իւրոյ
Սարիամու ծնեալ յանբանիցն մառւր.
և երկրպագեալ նմա մատուցին զընծայս
խորհրդոյ զտկի զկնդրուի և զմուսս,
յօրինակ ցուցեալ զծնունդն անախա-
կան յոսկւոյն մաքրութիւն և զշնորհս
Մատուածային տնօրէնութեմ բուրեալս
և ծաւալեալս յազինս աշխարհի՝ ըստ
բուրման անուշահոտութեան կնդրկի և
զմուսի պարարեալ և զմայլեցուցեալ
դքինս հոգւոյ հաւատացելոց 'ի հոտ ա-
նուղից ապրեցուցիչ 'ի բանս Մատու-
ծային աւետարանութեանց և խորհր-
դոց երկնաւոր պատգամաց. և հո լիւքն
բայցութեայք ցուցմամբ հրեշտակին եկին
և գտին զմանուկն զՅովսէփ և զմայրն
նորա Սարիամ. և սքանչացեալ ընդ նոյն
երևումն՝ օրհնէին և գովէին ընդ ձայ-
նից բաղմութեան հրեշտակաց խառնե-
լով զերգս քաղցրանուագս ասելով՝ փառք
'ի բարձունս Մատուծոյ և յերկիր խա-
ղաղութիւն՝ ի մարդիկ հաճութիւն և
օրհնութիւն": Ո՛հ անթափանծելի 'ի
մարդկային մտաց գերահրաշ զօրութեմ
և տեսեան. որով ամենայն արարածք
զգեցան հանդերձ փրկութեան. ցնծան և
այսօր աղչք և աշինք ընդ հրաշակերս
ծնունդն նորոգ: Եւ այս և ցնծա երկիր
ընդ մատողերամ որդովք նորոյս սիով

ՃԱՌ

Ասացեալ ի ղիմաց Հայ Մանկստոյ Կարապետեան
եւ Ազգային Հոգեւոր Ուսումնարանին Հայոց
Ախալցխոյ

Ի հանդիսի շնորհաւորութեան նոր
տարւոյ հիմնադրի "Եւր Մ. Բաշալոյս" ան-
ուամբ նորաբաց Ուսումնարանին Հայ
(Օրիորդաց Սեփականութիւն Պ. Սափա-
յէլի Սաղաթիկէտանց, ի նոցին իսկ Վալ-
րոցի 1869 ի 1 Յունվարի :

ՄԵՆՍԱՊԱՏԻԻ ՊԱՐՈՆ

Սեփական չնաշխարհիկ բուրաստա-
նիս Կարապետեան եւ Մ. Բաշալոյն Հոգեւոր
Ուսումնարանի մատաղ մանկտիք տեսէ՛ք,
որպիսի բերկրապատար հրճուանօք թէ
"Եւր Մ. Բաշալոյս" ուսումնարանի մեծպտիւ
հիմնադրիչ, եւ թէ իրենց նազելի քոյ-
րերնուն — Հայ (Օրիորդաց) "Շնոր-
հաւոր նոր տարի" գտնով ազնիւ զգաց-
մունքներ կուտան նաեւ հանդիսակից ե-
ղող պատուելեաց, եւ թէ նոյն իսկ հիմ-
նադրին եւ աշակերտութեաց, եւ որովհե-
տեւ այս առաջին անգամն է կրսեն, որ
մեր թշուառ քոյրերը այսպիսի բարեկարգ
Վալրոցի մը ծոցը դատարարակուելու
պատիւը եւ սէրը կունենան, այս առա-
ջինն է, որոյ համար այնչափ ուրախ կըլ-
լամբ կրսեն, որ ցանկացան մեր ամենուս
ծնողներն եւեւօք մայրերնիս, մէկ զի
դնել հին խելքերու թթուած խմորնե-
րն, ու կըրցան իրենց դստերս Ուսում-

նի. այսօր եւ ցնծան հոգիքն արդարոց
եւ ուրախանան. քանզի արարիչն երկնի
եւ երկրի զկերպ ծառայի զգեցեալ յերկ-
նից յերկիր խոնարհի՛ առ ՚ի կործանել
զտէրութիւն բռնակալ իշխանին աշխար-
հի որ ընդ իշխանութեամբ ընկրկեալ
զհոգիսն պահէր ՚ի խաւարի. ահաւասիկ
եւ խորհուրդն մեծ եւ սքանչելի՛ որ յայ-
սըմ աւուրս յայտնեցաւ՝ կազմեաց տօն
անթարգմանելի ուրախութեան երկնա-
ւորաց եւ երկրաւորաց, արդ որդիք
մարդկան ցնծացէք եւ ընդ ճառագայթս
երկնային լուսոյ որեւ տարածեաց իսպիւ-
ռս աշխարհի զզօրութիւն մեծ վայել-
չութեան իւրոյ եւ ՚ի չիք դարձոյց զզօ-
րութիւն մահուան եւ զթագաւորութիւն
բանտարկուն կործանեաց, եւ զվեքենայն
խորտակեաց թշնամոյն բնութեանս հաշ-
տելով զհայր ընդ օտարացելոց որդեւ-
ցրս, լոստ սուրբ գրոց որ ասէ "միէ
միջնորդ մարդկան եւ Մատուծոյ՝ մարդն
Յիսուս Վրիստոս", որ եւ զճանապարհ
ուրախութեան մեզ յորդեաց. որով եւ
հաղորդիմք երկնային անմեկնելի փառա-
ցըն յորս վայելեն որդիքն լուսոյ, ընդ
որում եւ մեք ազգք մարդկան տօնախըմ
բեւով ընդ հրեշտակացն դատուց միա-
ձայն երգակցիմք ասելով "փառք ՚ի բար-
ձունս Մատուծոյ, փառք եւ սքանչելա-
հրաշ ծննդեան եւ յայտնութեան տես-
ուրն մերոյ եւ վրկչին Յիսուսի Վրիս-
տոյ յաւիտեանս յաւիտեանից Մէն :

Ո. Զոհրապ Տէր Սարգսեան

Ի 5-ի Յունվարի 1869 թի
ի Ս. Եղմիսի :